

Թիւ 25675  
Մարտ 18, 1978

Արժանաշնորհ  
Տ. Մամբրէ ԲՆՆյ. Գուգուեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Գէյմպրիժ.

Սիրելի Տէր Մամբրէ,

Ստացած ենք Մարտ 8, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 26ին զուամբողջ համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները՝ ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Աղաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ժիական ժողովի անենագրութիւնը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր քինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ  
Աղաջնորդ

Օր. Անիթա Հեփիսըն  
Տորթ. Փօլ Պարսամ  
Տանըլտ Ճ. Թէլլալեան  
Փիթըր Զէյթունեան  
Չարլզ Նահապետեան